ՏԵՍԱՐԱՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՑԵՂԻ

ԱՄԵՐԻԿԱ

Բնակիչ 'ի շրջակայս Վէրա–գրուհի.

Մեխիգոյի դաշնակցութեան նահանգներէն մէկն է Վէրա–Գրուահ. որ ճշմարիտ խաչ կը թարգմանուի. համանուն մայրաքաղաք մը ունի՝ որ Մե-

Օրիորդ 'ի Պոկորա.

խիզոյի ծոցին վրայ նաւահանգիստ ալ է. օդը ջնասակար է. առուտուրը լաւ. բնակիչն է 10,000։

Վերին Գոլումպիոյ արևմտեան մասն է Նոր Կրանադա՝ որուն հինգ նահանգներէն մէկն է Գունտինամարգա, ասոր ալ չորս գաւառներէն առաջինն, Պոկոթա՝ որուն գլխաւոր քաղաքը նոյնպէս Պոկոթա կ'ըսուի կամ Սանդա Ֆէ տէ Պոկոթա, հոս կը նստին տէրութեան նախագահը և Արքեպիսկոպոսը. քաղքին դիրքը՝ 3,000 ոտնաչափ բարձր է ծովուն երեսէն՝ և ասոնց պատճառաւ կլիմայն ալ ցուրտ է, և վեց ամիս գրեթէ անընդհատ անձրևային եղանակ ունի

1538ին շինուեցաւ ասք քաղաքս, որուն մէջը կան շատ մը եկեղեցիներ, մենաստաններ, ուսմանց վարժարաններ և այլն. գեղեցիկ փողոցներ ունի, և հրապարակները աղբիւրներով զարդարուած են։ Բնակիչն է 40,000ի չափ։

Պոկոթա համանուն գետը՝ քաղքիս եղերքները բարձր ջրվէժ մը կը ձևացընէ, որուն ջուրը գրեթէ 600 ոտնաչափ բարձրութենէ՝ ժայռերէն վար կը թափի. բանտի դեղին քովերն ալ կան բնական ժայռերէ ձևացած հրաշալի կամուրջներ. որոնց մէկուն բարձրութիւնը 298 ոտնաչափ է, և ամբողջ կամուրջը միակտուր քար մըն է 44 ոտք երկայն և 35 ոտք լայն. ուրիշ մըն ալ կայ աւելի նուազ բարձր՝ որ իրարու կպած երեք ժայռերէ ձևացած է։

ՏԵՂԱԴՐՈՒԹԻՒՆ

ՀԱՑՈՑ ՄԵԾԱՑ

ԱՆԻ

Է. ԵԿԵՂԵՑԻ. — Յօթներորդ եկեղեցին 'ի միջավայրս անդ քաղաքին է մօտ առ Առաքեալսն։ Սա որչափ ինչ յաւերակացն նշմարի, մի 'ի գէղեցկաշէն եկեղեցեացն էր. այլ արդ հիւսիսային կողմն միայն կայ հանդերձ մասամբ խորանին, այլոցն առ հասարակ փլատակ կուտեալ շուրջանակի։ Եկեղեցիս թէպէտ և փոքր է տարածութեամբ, այլ այնու առաւելու քան զայլս՝ զի ընդ յատակաւն ծայր 'ի ծայր ներքնատուն է գեղանափոր կամարակապ և ցարդ անկործան։ Արձանագիր չերևի ուրեք 'ի ճնացորդ մասունս նորին։

Ը. ԵԿԵՂԵՑԻՆ. — Ութերորդ եկեղեցին ամենափոքր 'ի վերայ ճանապարհին կայ որ հանէ 'ի միջնաբերդն։ Եւ սորա քանդեալ երից կողմանցն՝ տեղի խորանին հանդերձ կողմնակի դրամբն կանգուն կայ ցարդ վայելուչ յօրինուածովք։

Թ. ԵԿԵՂԵՑԻՆ. — Անցեալ 'ի միջնաբերդն ընդառաջ լինի 'ի հարաւոյ կուսէ նորա իններորդ եկեղեցին 'ի զառիվայր տեղւոջ և մօտ 'ի պարիսպն, որ և բարձրահայեաց դիտէ յԱխուրեանն գետ։ Եւ սա միջակ է մեծութեամբ հոյակապ, և այլատարազ ձևովն, վսեմ հանգամանքն ճարտարապետութեան, և գմբէթիւն և ստուարութեամբ քարանցն առ հասարակ, և առ երի գեղեցկաշէն մատրամբն. այլ աւաղ զի մեծաւ մասամբ քայքայեալ ճնացորդ մասունքն յոգւոց հանել տան հնախոյզ հայրենասիրին որ չհանդարտէ անթաց աչք և անկարեկիր սրբոտիւ մեկնիլ 'ի տեղւոջէն։

Ժ. ԵԿԵՂԵՑԻՆ. — Ցաներորդն է 'ի կողմն մի միջնաբերդին 'ի հիւսիսոյ նախասացեալ եկեղեցւոյն 'ի վերայ բլրի. ձև նորա կամարակապ, որմունքն հասարակ և ոչ նշանաւոր ինչ 'ի նմա։

Այդոքիկ տաճարքին եկեղեցիքդ որ կանգուն և որ կիսափուլ երևին 'ի քա-